# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ VIII ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Ինչպես արդեն հաղորդվել է մեր թերթում, հուլիսի 12-ին տեղի ունեցավ ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ քսաներորդ գումարման սովետի ութերորդ նստաշրջանը, որը քննարկեց հետևյալ հարցերը.

1. Պարենային ծրագրի իրականացման և մարզի բնակչությանը սննդամթերքների մատակարարման ուղղությամբ ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեի աշխատանքի մասին։

2. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանական ՍՍՀ կազմից դուրս գալու հռչակման մասին։

3. Կազմակերպական հարցեր։

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի տեղակալ, դեպուտատ Վ. Ա. Ջաֆիյանը։

ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեն, ասաց նա, այսօրվա պահանջների լույսով վերակառուցում է իր աշխատանքը, գյուղի ղեկավարների, մասնագետների, բոլոր աշխատավորների ջանքերը նպատակամղում գյուղատնտեսության բոլոր ճյուղերում, էկոնոմիկայի ղեկավարման նոր մեթոդները արտադրությունում էլ ավելի արդյունավետ արմատավորմանը, տեխնիկայի մթերքների արտադրության և դրանց ծավալների մեծացմանը, արտադրանքի որակի փոխարինմանը։ Արտադրության մեջ ակտիվորեն արմատավորվում է աշխատանքի կազմակերպման կապալային մեթոդը, ամրապնդվում են տնտեսական փոխհարաբերությունները, մեծ աշխատանք է կատարվում մարզի կոլտնտեսությունները, սովխոզները և ագրոհամալիրի մյուս ստորաբաժանումները ինքնաֆինանսավորման և լրիվ տնտեսհաշվարկի փոխադրելու ուղղությամբ։ Ներկայումս կապալային մեթոդով աշխատում է բրիգադների 37,8, տնտհաշվարկային ստորաբաժանումների 43,3 տոկոսը։ Նրանց խնամակալության տակ գտնվում է 12493 հեկտար վարելահող։ Անասնաբուծական և անասնապահական կապալով աշխատում է 1866 մարդ։ Նրանց հետ պայմանագրեր են ստորագրված խոշոր եղջերավոր անասունների մատղաշ, խոզեր, բուսաբուծական կուլտուրաներ աճեցնելու մասին։ Գործնականում մարզում համոզվում են տնտհաշվարկային կապալային մեթոդի առավելությունների մեջ։

Սակայն, ասաց հռետորը, տնտեսական պրոբլեմների բարդ միահյուսման պայմաններում կոլտնտեսությունները, սովխոզներն ու առանձին ճյուղեր տնտեսական հաշվարկի և ինքնաֆինանսավորման փոխադրելը դյուրին գործ չէ։ Տնտեսություններից շատերը ֆինանսական դժվարություններ են հանդիպում, մեծ պարտքեր ունեն պետությանը հանդեպ։ Ընդհանուր առմամբ մարզի 10 տնտեսություններ բանկային վարկերով ունեն 6,3 միլիոն ռուբլու ընդհանուր գումարի հասնող ժամկետանց պարտք։ Ֆինանսական այսպիսի վիճակի մեջ ինքնաֆինանսավորման փոխադրվելը գործնականում դժվար է։ Մեր կողմից բազմիցս հարց է հարուցվել հանրապետության ագրոարդյունաբերական կոմիտեի և կառավարության առջև՝ ֆինանսական վիճակն առողջացնելու մասին։ Հարցը լուծված է միայն մասնակիորեն՝ Շուշիի և Հադրութի շրջաններում։ Մինչդեռ հեռու չէ 1989 թվականը, երբ ուժի մեջ կմտնի «Պետագրոարդի համակարգի ձեռնարկություններն ու կազմակերպությունները լրիվ հաշվարկի և ինքնաֆինանսավորման փոխադրելու մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը։

Տասներկուերորդ հնգամյակի նախորդ երկու երաշտային տարիները բավականին անբարենպաստ եղան մարզի հացահատիկային տնտեսության համար, այնուհետև ասաց զեկուցողը։ Այդ տարիներին հաջողվեց միայն արտադրել 42,1 և 46,6 հազար տոննա հատիկ, ինչը պլանի համեմատությամբ կազմում է համապատասխանաբար՝ 70,4 և 74,4 տոկոս։ Դժվարին պայմաններ են նաև այս տարի։ Հացահատիկի բերքը հավաքելու պահին հորդառատ անձրևները դժվարացրին բերքահավաքի կամպանիան, մեծացան հատիկի կորուստները։ Այսպիսով, համարյա ամեն տարի ղարաբաղցի երկրագործը դժվարին պայմաններում է աշխատում։ Ելնելով այդ բանից, որոնվում են հացահատիկի բերքի ստացման կայունացման ուղիներ։ Ագրոտեխնիկայի կատարելագործման, հացահատիկային մշակության մեջ կարևոր ուղղություններ են համարվում ցելի խոտով պահպանումը (հարթավայրային գոտում), աշնանացան հասկավորների տեսակային կազմի ստանդարտի ներդրումը, սերմնաբուծության և ցանքերի կատարելագործումը, մասնավորապես հանքային պարարտանյութերի կիրառումը, մշակության ինտենսիվ մեթոդների արմատավորումը։

Մարզի հացագործները լավ բերք են աճեցրել։ Ցորենադաշտերի հեկտարից միջին հաշվով կալսվում է 25 և ավել ցենտներ հատիկ, ստացվում է հացահատիկի ոչ պակաս քան 70-75 հազար տոննա համախառն բերք։ Միաժամանակ հավաքվում է ծղոտ, կատարվում հերկ։

Նախկինում խաղողագործության ու նրա վերամշակող ճյուղի՝ գինեգործության բուռն և միակողմանի զարգացումը վնաս է հասցրել գյուղատնտեսության մյուս ճյուղերին։ Հատկացվել են խոշոր կապիտալ ներդրումներ։ Գինեգործության ձեռնարկությունների հիմնական ֆոնդերը վերջին տարիներին աճեցին ավելի քան 4 անգամ։ Այդ բանը հասցնում էր եթե ոչ լճացման, ապա գյուղատնտեսական արտադրության մյուս ճյուղերի, մասնավորապես անասնապահության չափազանց դանդաղ զարգացման։ Այլ ճյուղերի զարգացման համար խաղողայգիների տարածքներն ազատելու և օգտագործելու նպատակով դրանք հասցվել են օպտիմալ չափերի՝ 11,1 հազար հեկտարի։ «Հարբեցողության և ալկոհոլիզմի հաղթահարման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի հայտնի որոշման պահանջների լույսով խաղողայգիների մի մասը վերահիմնադրվում են սեղանի տեսակների այգիների։ Նախատեսվում է մինչև 1990 թվականը սեղանի տեսակների տարածքը հասցնել մինչև 5 հազար հեկտարի, ինչը կկազմի ընդհանուր տարածքի 45 տոկոսը։

Բնակչությանը սննդամթերքներով ապահովելու միջոցառումների պլանի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բանջարեղենի, մրգերի և կարտոֆիլի արտադրության հետագա ավելացումը։ Ինչպես հայտնի է, այս արտադրանքը մենք հիմնականում թողարկում ենք տեղական շուկայի համար։ Սակայն թողարկվող արտադրանքի ծավալները չեն ապահովում բնակչության պահանջմունքները։ Մենք բավականաչափ ետ ենք մնում պտուղբանջարեղենի արտադրության, նրա պահպանման, վերամշակման գիտական կազմակերպումից։ Դա տեսանելի եղավ ընթացիկ տարում, երբ շուկան չի ապահովում բնակչության պահանջմունքները։

Անցած երկու տարում արտադրվել են մոտ 7,4 հազար տոննա բանջարեղեն, 2 հազար տոննա կարտոֆիլ, 1700 տոննա միրգ։ Բանջարեղենի և մրգի վաճառքի պլանները կատարվել են։ Իսկ այդ մթերքներով բնակչության ապահովման տեսակետից դրանք կազմում են պահանջմունքի 25-35 տոկոսը միայն։ Դրա ելնելով ընթացիկ տարվա դառը փորձից, ասաց զեկուցողը, հարկ է վերանայել և արմատապես փոխել վերաբերմունքը բանջարեղենի, կարտոֆիլի և մրգերի արտադրության նկատմամբ։ Շատ տնտեսությունների համար դրանք շահութաբեր չեն, որտեղից էլ անբարյացակամ վերաբերմունք է ծնվում այս կարևոր գործի հանդեպ։

Ստեփանակերտի սննդի ձեռնարկությունում յուրացված է ջեմերի, կոմպոտների, մարինադների և մրգերից ու հատապտուղներից այլ սննդամթերքների թողարկումը։ Պտղաբանջարեղենային արտադրանքի գնումների, նրա պահպանման, վերամշակման և ժամանակահատվածի կարգավորման նպատակով կազմակերպված է մթերման-վաճառահանման միջշրջանային բազա, որն առայժմ առաջին հետադարձ քայլերն է կատարում։

Պարենային ծրագրի լուծման գլխավոր հարցերից մեկը անասնապահական մթերքների արտադրության ավելացումն է։ 1985 թվականի ձեռք բերված մակարդակի համեմատությամբ 12-րդ հնգամյակում մսի գնումները պետք է ավելանան 31,8 տոկոսով, կաթինը՝ 11,0 տոկոսով, ձվինը՝ 24,1 տոկոսով կամ 1986-1990 թվականներին մսի տարեկան միջին աճը կկազմի 6,4 տոկոս, կաթինը՝ 2,2 տոկոս։ Պարենային ծրագրով այս պիտի խնդիր է դրված մարզի առջև։ Նախատեսված նպատակներին հասնելու համար կուսակցական և սովետական մարմինների ղեկավարությամբ կոնկրետ քայլեր են ձեռնարկվում ճյուղի ինտենսիվացման, արտադրության մեջ գիտության նվաճումների և առաջավոր պրակտիկայի արմատավորման, անասունների մթերատվության բարձրացման համար։

Ընթացիկ տարում Մարտունում շահագործման հանձնվեց 528 հազար բրոյլերի համար նախատեսված միջտնտեսային բրոյլերային ֆաբրիկա, ավարտված է 22 հազար գլուխ ածան հավի համար Ասկերանի շրջանի միջտնտեսային թռչնաֆաբրիկայի մասնակի շահագործումը, որի կարողությունը տարեկան 2 միլիոն հատ ձու է, 1500 գլուխ երինջների համար միջտնտեսային համալիր է կառուցվում Ասկերանի շրջանում։

Գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացման խոշորամասշտաբ միջոցառումների հետ միասին, այնուհետև ասաց հռետորը, պարենային ռեսուրսների համալրման էական աղբյուր է բերքը հավաքելիս, փոխադրելիս, պահպանելիս և վերամշակելիս նրա կորուստների կրճատումը։ Պրոբլեմը իր լուծումը կգտնի, եթե տեղերում համապատասխան լինեն հաղորդիչ վերամշակող ճյուղերի առաջնային զարգացման մասին կուսակցության հիմնադրույթների իրագործմանը։ Ցավոք, մեր մարզում այդ ճյուղը ետ է մնում։ Մինչև վերջին ժամանակներս ԼՂԻՄ-ում վերամշակման ճյուղը ներկայանում էր մսի և կաթի կոմբինատների ու մի շարք գինեգործական ձեռնարկությունների տեսքով, որոնք հարբեցողության և ալկոհոլիզմի վերացման մասին որոշման ընդունումից հետո չէին կարող օգտագործվել իրենց ամբողջ արտադրողականությամբ և պահանջեցին արմատական վերակառուցում և տեխնիկական վերազինում։ Վերամշակող ձեռնարկությունների արտադրական շատ կարողություններ ֆիզիկապես և բարոյապես հնացած են, նրանց ամենամյա նորացումը չի անցել 2 տոկոսից։ Նրանք ունեն տեխնիկական զինվածության ցածր մակարդակ։ Միայն իսկ մսի-կաթի արդյունաբերության մեջ զբաղված յուրաքանչյուր երրորդ մարդ աշխատանքները կատարում է ձեռքով։ Տարիներով չեն լուծվել վերամշակման ճյուղերում առաջադիմական տեխնոլոգիաների, բարձրարտադրողական սարքավորումների արմատավորման հարցերը, ինչը թույլ չի տվել մարզի գյուղատնտեսական ռեսուրսները առավել լրիվությամբ օգտագործել սննդամթերքների արտադրության, նրանց որակի բարձրացման և տեսականու ընդլայնման համար։

Հաշվի առնելով այս և մյուս բոլոր թերությունները, ագրոարդյունաբերական կոմիտեն վերջին տարիներին ամենավճռական միջոցներ է ձեռնարկում դրությունը շտկելու համար։ Ստեփանակերտի նախկին գինեգործարանի տարածքի մի մասը հատկացված է պտուղ-բանջարեղենային պահածոների արտադրությանը, կառուցվել է կորիզավոր մրգերի վերամշակման արտադրամաս, իսկ ձեռնարկությունն ինքը վերանվանվել է սննդի, քանի որ թողարկվող սննդային արտադրանքի տեսակարար կշիռը ներկայումս էլ գերազանցում է գինեգործականը։ Խաղողի վերամշակման №№ 2 և 3 գործարաններում, Ստեփանակերտի սննդի ձեռնարկությունում տեղադրված են բնական խաղողահյութի լցման գծեր։ Գեղարքավանի գինեգործարանում կառուցված է 40 հազար դեկալիտր ծավալով հյութի պահեստ։ Արմատավորվում է մեծ ռեզերվուարներում խաղողի հյութի ասեպտիկ պահածոյացումը։ Մթերման-վաճառահանման միջշրջանային բազայում կառուցված է պտուղ-բանջարեղենի վերամշակման արտադրամաս, տեղադրված՝ պոմիդորի հյութի գիծ, յուրացվում է չորացրած մրգերի, թթուների, մարինադների, պտուղ-բանջարեղենային պահածոների, ոչ ալկոհոլային ըմպելիքների և հյութերի պատրաստումը։ Նախատեսվում է անմիջապես հումքային գոտում կառուցել 8 միլիոն պայմանական բանկա կարողությամբ պահածոյի գործարան, ինչպես նաև փոքր կարողություններով 3 արտադրամաս։

Վերամշակող ձեռնարկությունների շարքում առանձնակի տեղ են գրավում անասնապահական արտադրանքի վերամշակման ձեռնարկությունները։

Ստեփանակերտի կաթի կոմբինատը սիստեմատիկաբար կատարում է պլանները և արտադրական վատ ցուցանիշների չի հասել։ 1985 թվականին կոմբինատը մասամբ վերակառուցվել էր։ Գործարկվել են լրացուցիչ կարողություններ, տեղադրվել ներմուծվող սարքավորումներ, որոնք թույլ են տալիս ապահովել անթափոն արտադրության փակ ցիկլը։ Լրիվ վերակառուցվել են պանրագործական արտադրամասը, յուղի արտադրամասը, կառուցվել [illegible] չորացման արտադրամաս։ Այդ աշխատանքների համար կատարվել են 7,3 միլիոն ռուբլու կապիտալ ներդրումներ։ Սակայն ձեռնարկության շահագործման երկու տարիները համոզում են, որ անցկացված վերակառուցումը լրիվ չափով չի համապատասխանում պարենային ծրագրով առաջադրված խնդիրներին, ի վիճակի չէ լուծել վերակառուցման ընթացքում ծագող խնդիրները։ Թողարկվող արտադրանքի տեսականու մեջ բացակայում են բնակչության կողմից բարձր պահանջարկ վայելող ստերիլ կաթը, այնպիսի կաթնամթերքներ, որոնց խառնված են պտուղ-հատապտղային լցանյութեր, մանկական և դիետիկ սննդամթերքներ, մանր փաթեթավորմամբ մթերքներ։

Այս ամենը պահանջում է արդեն 1988 թվականին սկսել անարատ արտադրանքի և պաղպաղակի թողարկման արտադրամասերի վերակառուցումը, կազմակերպել անարատ կաթի չոր փոխարինիչի արտադրությունը։

Ստեփանակերտի մսի կոմբինատը, որը գոյացել է տարբեր տարիների կառուցված ամեն տեսակի շինությունների կցման ճանապարհով, այդպես էլ չի դարձել այնպիսի ձեռնարկություն, որն աշխատի տեխնոլոգիական փակ փուլով։ Չնայած նրան, որ կոմբինատը յուրացրել է [illegible] կիսաֆաբրիկատի, կաթնային նրբերշիկների, խառնուրդների օգտագործման կիսաապխտած երշիկների արտադրությունը, այստեղ շատ կան չլուծված պրոբլեմներ, որոնց լուծման ուղղությամբ պետք է ջանքերը ներդնեն աշխատանք ագրոկոմիտեի համապատասխան բաժինը և կոմբինատի ղեկավարությունը։ Հասունացել է մսի նոր կոմբինատի շինարարության հարցը։

Ընկ. Ջաֆիյանը խոսեց մարզի հացի գործարանների գործունեության մեջ եղած թերությունների մասին։ Ստեփանակերտի հացի գործարանից շարունակում են ցածրորակ հաց ստանալ խանութները, որը առաջ է բերում աշխատավորների արդարացի կշտամբանք։ Ղեկավարների կողմից ցածր տեխնիկական զինվածությունը, սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածությունը, արտադրողական կարողությունների պակասը պատրվակ բռնելը հիմք ունի, սակայն հնգամյա պլանի մեջ մտցված է գործարանի վերակառուցումը։ Դրա հետ մեկտեղ գործարանը պետք է լիովին օգտագործի իր բոլոր ներքին ռեսուրսները, ինչը թույլ կտա զգալիորեն բարելավել թողարկվող հացի որակը, ընդլայնել նրա տեսականին։

Պարենամթերքների պակասի համալրման համար կարևոր նախադրյալ կարող են լինել նաև ձեռնարկությունների և կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների օժանդակ տնտեսությունները։ Կուսակցության մարզկոմի բյուրոյի և մարզգործկոմի որոշմամբ մարզի շատ ձեռնարկությունների հատկացված են համապատասխան հողամասեր և հնարավորություններ են ստեղծված օժանդակ տնտեսությունների կազմակերպման համար։

Հատկապես պետք է կանգ առնել քաղաքացիների անհատական օժանդակ տնտեսությունների վիճակի վրա, որոնք կարող են մեծ դեր խաղալ պարենային պրոբլեմի լուծման գործում։ Այստեղ արտադրվող պտուղ-բանջարեղենային արտադրանքի մեծ քանակությունից բացի 1987 թվականին նրանք արտադրել են 4492 տոննա միս, 18077 տոննա կաթ, 19331 հազար հատ ձու, ինչը ամբողջ մարզում արտադրված ընդհանուր ծավալի մեջ կազմում է համապատասխանաբար 37,4, 31,4 և 64,0 տոկոս։ Սակայն շրջգործկոմների, գյուղական և ավանային սովետների, շրջանային ագրոարդմիավորումների, տնտեսությունների ղեկավարների կողմից անբավարար օգնություն է ցույց տրվում քաղաքացիների անհատական օժանդակ տնտեսությունների զարգացման գործին։ Տեղ ունեն նրանց տնամերձ հողամասեր տրամադրելու հարցի անհիմն ձգձգումները, ամենուրեք չէ նրանց հնարավորություն տրվում անհատական բակերը ապահովել կերերով։

Կարևոր գործ է բնակչությանը գյուղատնտեսական մթերքների վաճառքի և դրանց մթերումների կազմակերպումը։ Այստեղ ներգրավված են մթերման-վաճառահանման միջշրջանային բազան, մարզսպառմիությունը, [illegible], տարբեր կոոպերատիվներ և այլ կազմակերպություններ։ Սակայն նրանցից շատերը իրենց գործունեության առյուծի բաժինը հատկացնում են վաճառքին, իսկ մթերումների կազմակերպման գործը մնում է ստվերում, հատկապես ետ է մնում անմիջապես քաղաքացիներից անհատական օժանդակ տնտեսություններում աճեցված գյուղատնտեսական մթերքների մթերումների կազմակերպման գործը։ Այստեղ մարզսպառմիությունը պետք է հանդես գա գլխավոր կազմակերպչի դերում, որոնի գործի լավագույն կազմակերպման նոր ուղիներ, ձևեր և մեթոդներ։

Վերջում զեկուցողն ասաց, որ մարզի ագրոարդյունաբերական համալիրի աշխատողները իրենց պրոբլեմների արդարացի լուծման հույսով իրենցից կախված ամեն բան կանեն դրությունը շտկելու, պարենային ծրագրի իրականացման ուղղությամբ իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն։

Եղանակային բարենպաստ պայմանները շրջանի երկրագործներին թույլ են տվել այս տարի աճեցնել հացահատիկային և կերային կուլտուրաների ռեկորդային բերք, բացելով զեկուցման շուրջը մտքերի փոխանակությունը, ասաց Մարտակերտի շրջգործկոմի նախագահ, դեպուտատ Վ. Ս. Զավադյանը։ Այսօրվա տվյալներով շրջանում մթերվել է 14 հազար տոննա հացահատիկ, 40 հազար տոննա սենաժ և 4,5 հազար տոննա ծղոտ։ Կերահայթայթման աշխատանքները շարունակվում են, և բոլոր հիմքերը կան ասելու, հանրային անասնագլխաքանակի առաջիկա ձմեռումը ապահով կլինի, իսկ դա անասնապահական մթերքների արտադրության հետագա ավելացման գրավականն է։

Խոսելով բնակչությանը սննդամթերքներով ապահովման գործի վիճակի մասին, հռետորն ընդգծեց, որ այժմ շրջանում կա կոնդիցիայի հասցված 450 տոննա անասուն, սակայն ագրոարդի ձեռնարկությունների չհամաձայնեցված գործողությունների, անշրջահայացության պատճառով միսը իրացնել չի հաջողվում։ Տնտհաշվարկի, ինքնաֆինանսավորման և ինքնածախսածածկման պայմաններում տնտեսություններին ամենևին էլ ձեռնտու չէ իրենց մոտ պահել կոնդիցիայի հասցված անասունը, որի հետագա պահվածքը սովորականից ավելի թանկ է նստում (յուրաքանչյուր կիլոգրամ քաշաճի հաշվով հարկ է լինում ծախսել զգալի շատ կերային միավոր, ինչը հանգեցնում է արտադրվող մսի ինքնարժեքի բարձրացման)։ Ի՞նչ անել, ո՞ւր տանել, ասենք, իրացման ենթակա 6 հազար մատղաշ ոչխարը։

Ունենալով բնակլիմայական և հողային բացառիկ հիանալի պայմաններ (նկատի ունեմ ոռոգելի հողերը), այնուհետև ասաց Վ. Զավադյանը, մենք կարող ենք կարգավորել մարզի բնակչությանը բանջարեղենով ապահովելու գործը։ Անթույլատրելի է, որ ամռան այս օրերին ոչ միայն շուկաները չեն հագեցված մրգերով և բանջարեղենով, այլ նույնիսկ հիվանդանոցներն ու մանկական նախադպրոցական հիմնարկները չեն ապահովված դրանցով։ Տնտեսությունների ղեկավարները ավելի շատ ուշադրություն են նվիրում պլանային առաջադրանքների կատարմանը, երկրորդ պլան մղելով ռեգիոնի բնակչության շահերը։ Նշանակում է, մարզի ագրոարդյունաբերական կոմիտեն, շրջանային միավորումները, կազմելով գյուղատնտեսության զարգացման հեռանկարային և տարեկան պլանները, պետք է առաջին հերթին առաջնորդվեն այն բանով, թե այդ պլանները ինչքանով կարող են ապահովել պարենային ապրանքների հանդեպ բնակչության պահանջմունքների բավարարումը։

19-րդ համամիութենական կուսակցական կոնֆերանսում կարևոր այլ հարցերի հետ միասին ամբողջ սրությամբ դրվեց բնակչությանը պարենային ապրանքներով ապահովելու հարցը, ասաց Ասկերանի շրջանի Ս. Ստեփանյանի անվան կոլտնտեսության մեխանիզատոր, դեպուտատ Ս. Գ. Աղաբեկյանը։ Լավ է ասված՝ արմատական վերակառուցման հենց ժողովրդի համար ամրապնդվի, անհրաժեշտ է, որ նա տեսնի, զգա նրա շոշափելի արդյունքները։ Այս առումով առավելագույն հնարավորություններ կան պարենային ծրագրի իրագործման, բնակչությանը սննդամթերքներով բավարարելու գործում։ Իսկ դրա համար պետք է փրկել գյուղը։ Անցյալում թույլ տրված սխալները և առաջին հերթին տնտեսությունների խոշորացման հետ կապված սխալները, հանգեցրել են կենտրոնական դաստակերտների բարգավաճմանը և ծայրամասային գյուղերի դատարկմանը։ Տարիներով չեն լուծվել այդ բնակավայրերի սոցիալական, կուլտուրական, կենցաղային պրոբլեմները, ճանապարհներ չեն կառուցվել, և մարդիկ լքել են հարազատ վայրերը, օջախները, տեղափոխվել քաղաք։ Պետք է վերածնել քարտեզից անհետացած և անհետացող այդ գյուղերը, շունչ տալ նրանց, և դա լավ նախադրյալ կդառնա պարենային պրոբլեմի լուծման համար։

Իսկ դրա համար պետք է ապախոշորացնել տնտեսությունները, գյուղերին հնարավորություն տալ զարգանալ ինքնուրույն։ Ես, իհարկե, նկատի ունեմ այն գյուղերը, որոնք դեռ բոլորովին չեն դատարկվել և ի վիճակի են ստեղծել առանձին տնտեսություն։

Առաջին կիսամյակում մարզի կոոպերատորները բանջարեղենի և մրգերի մթերման ու բնակչությանը իրացման պլանը կատարել են 60 տոկոսով, մսի և մսեղենի մթերման ու իրացման պլանը՝ 40 տոկոսով։ Այն մասին, թե դա ինչպես է տեղի ունեցել և ինչու կոոպերատորները, որոնք պարտավոր են ոչ միայն բավարարել բնակչության պահանջարկը, այլև ինչ-որ չափով ազդել կոլտնտեսային շուկաներում գյուղատնտեսական մթերքների գների վրա, այդպես վատ են աշխատել, նստաշրջանում պատմեց մարզսպառմիության վարչության նախագահ, դեպուտատ Ի. Ե. Գրիգորյանը։

Մարզի մթերող կազմակերպությունները, ասաց նա, հանրապետությունում սահմանված կարգի համաձայն զրկված են մարզի սահմաններից դուրս գյուղատնտեսական մթերքներ մթերելու հնարավորությունից։ Մարզից դուրս գյուղատնտեսական մթերքների գնումներ կատարելը թույլատրելու խնդրանքով վերադաս կազմակերպություններին մեր բազմաթիվ դիմումները ըմբռնումով չեն ընկալվել։ Իսկ մեզ մոտ՝ մարզում, ինչպես հայտնի է բոլորին, բանջարեղենի և մրգերի մեծ մասը հասունանում է երրորդ եռամսյակում։ Ընթացիկ տարում մենք Հայաստանի առևտրական կազմակերպությունների հետ պայմանագիր ենք ստորագրել վաղահաս բանջարեղեն բերելու մասին։ Սակայն մարզի շուրջը ստեղծված իրավիճակի պատճառով մենք առ այսօր չենք կարողանում գյուղատնտեսական մթերքներ բերել։

Հռետորը հույս հայտնեց, որ եթե մարզի ագրոարդյունաբերական կոմիտեն, շրջսովետների գործկոմները ընդառաջեն կոոպերատորներին, օգնեն նրանց, հարթավայրային գոտիներում հողամասեր հատկացնել գյուղատնտեսական մթերքների մշակության կոոպերատիվներ ստեղծել ցանկացող բոլոր քաղաքացիներին, ապա դա թույլ կտա նրանց, հենվելով վերջերս ընդունված «ՍՍՀՄ-ում կոոպերացիայի մասին» օրենքի վրա, ավելի լրիվ չափով բավարարել մարզի բնակչության պահանջմունքները բանջարեղենի (այդ թվում վաղահաս) և մրգերի նկատմամբ։

Գյուղատնտեսական արտադրության ամբողջ համալիրում հատուկ տեղ է զբաղեցնում հատիկաբուծությունը, ասաց Մարտունու շրջանային ագրոարդմիավորման խորհրդի նախագահ Ռ. Ս. Ղարիբյանը։ Ժողովրդական իմաստությունն ասում է. հացը ամեն ինչ է։ Եվ դա, իրոք, այդպես է։ Հատիկաբուծության մեջ գործերի ճիշտ դրվածքը շատ կողմերով նպաստում է թե կերային բազայի ամրապնդմանը, թե անասնապահության զարգացմանը։ Մարտունու շրջանի հացագործները միշտ էլ աչքի են ընկել իրենց աշխատանքի լավ արդյունքներով։ Հողը այս անգամ էլ չխաբեց նրանց և դաշտի աշխատավորներին շռայլորեն հատուցեց, բերք պարգևեց։ Իսկ երկրագործներն էլ, կլիմայական բարդ պայմաններին հակադրելով բարձր կազմակերպվածությունը, կարգապահությունը, ինչպես ասում են, երթում արագորեն կողմնորոշվելու կարողությունը, բերքահավաքը անց են կացնում վստահորեն և հուսալի։ Այսօրվա տվյալներով հնձի ենթակա 12 հազար 310 հեկտար արտից (հիմնականում հարթավայրային գոտում) հավաքվել է 7400 հեկտարի բերքը և կալսվել 22 հազար տոննա հացահատիկ, կամ յուրաքանչյուր հեկտարից գրեթե 30 ցենտներ։ Առաջներում երբեք մարտունեցիները այդպիսի բերք չեն ստացել։ Էլ ավելի առատ բերք են խոստանում գյուղամերձ հողամասերը։

Պարենային ծրագրի մյուս կարևոր հարցերից հռետորը առանձնացրեց անասնապահական մթերքների արտադրությունը, որոնց կատարման կիսամյա պլանները չեն կատարվել։ Այդ ժամանակամիջոցում շրջանը պետությանը պարտք է մնացել 372 տոննա միս, 834 տոննա կաթ և 310 հազար հատ ձու։ Միևնույն ժամանակ, ընդգծեց նա, այն պատճառով, որ մթերող կազմակերպությունները հրաժարվում են տնտեսություններից միս և ձու ընդունել, շրջանի տնտեսություններում փչանում է զգալի քանակությամբ ձու, իսկ մսամթերման կոնդիցիայի հասցված 4000 գլուխ ոչխարները, խոշոր եղջերավոր մեծարանի անասուններն ու խոզերը մնում են ֆերմաներում և իզուր կեր ծախսում։

Այն մասին, թե ինչպես են բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը օգնում տնտեսություններին՝ լուծելու գյուղի էական պրոբլեմները և ով ինչպես է օգտվում այդ հնարավորությունից, իր ելույթում պատմեց ագրոարդբանկի մարզային բաժանմունքի կառավարիչ, դեպուտատ Ս. Ա. Թևոսյանը։ Հուլիսի մեկի դրությամբ մարզի ագրոարդյունաբերական համալիրում երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերի գումարը կազմում է 210 միլիոն ռուբլի, ասաց նա, դրանից 197,8 միլիոն ռուբլին բաժին է ընկնում ագրոարդի ձեռնարկություններին և հիմնարկներին։ Ձեռնարկություններ և հիմնարկներ, այդ թվում 10 սովխոզներ ունեն 13 միլիոն ռուբլու ընդհանուր արժեքի ժամկետանց վարկեր, ինչի համար էլ ընթացիկ տարվա 6 ամսում նրանք տուգանք են վճարել 800 հազար ռուբլու չափով։

Խաղողագործության բարձր շահութաբերությունը, կարելի է ասել, նպաստել է շրջանառու միջոցների հանդեպ տնտեսությունների անփույթ վերաբերմունքին, դրամական միջոցների անհաշվենկատ օգտագործմանը։ Իրենց ուշադրությունը կենտրոնացնելով այդ բարձր արդյունավետ ճյուղի զարգացման վրա, տնտեսությունների ղեկավարները մոռացության են մատնել պարենային ծրագրի կատարման համար մյուս ոչ պակաս կարևոր ճյուղերը։ Եվ նրանք աստիճանաբար դարձել են պակաս շահութաբեր, անշահութաբեր և նույնիսկ վնասաբեր, իսկ այդ պատճառով էլ, անհրապույր։ Կարծում եմ, գների սպասվող ռեֆորմը շահագրգռություն կստեղծի առանց բացառության գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերի միատեսակ զարգացման և հողագործական ու անասնապահական բոլոր տեսակի մթերքների արտադրության ավելացման գործում, և միևնույն ժամանակ կնպաստի ամբողջ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը։

1989 թվականից ագրոարդի բոլոր ձեռնարկություններն ու հիմնարկները կփոխադրվեն լրիվ տնտհաշվարկի, ինքնաֆինանսավորման և ինքնածախսածածկման, այնուհետև ասաց Ս. Թևոսյանը, և պետք է որպեսզի բոլորը, սկսած տնտեսությունների ղեկավարներից մինչև շարքային աշխատողները, սովորեն գնահատել և խնայել ոչ թե հասարակական ամեն մի ռուբլի, այլ յուրաքանչյուր կոպեկ։ Էկոնոմիկայի կառավարման արմատական ռեֆորմի մասին կուսակցության և կառավարության որոշումները տնտեսություններին լայն հնարավորություններ են ընձեռում աշխատավորների նյութական շահագրգռության բարձրացման հիման վրա զգալիորեն ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Այդ հնարավորություններից պետք է հմտորեն օգտվել։

Մարտակերտի շրջանի Լենինի անվան սովխոզը, ասաց այդ տնտեսության խաղողագործ, դեպուտատ Ա. Ս. Հակոբյանը, բոլոր հնարավորություններն ունի (լավ հողեր, ոռոգման համակարգ, բնակլիմայական պայմաններ), որպեսզի ապահովի իր կոլեկտիվի պահանջմունքները և շրջանային ու մարզային կենտրոնի բնակչությանը մատակարարի վաղահաս բանջարեղեն ու բոստանային կուլտուրաներ։ Սակայն, ցավոք, մի կողմից վերադաս պլանավորող մարմինները, իսկ մյուս կողմից էլ տնտեսության ղեկավարները պատշաճ ուշադրություն չեն նվիրում մարզի բնակչության համար այդ կենսականորեն կարևոր հարցին և շարունակում են ուշադրության կենտրոնում պահել խաղողագործության զարգացման հարցերը, մի ճյուղ, որը ներկա պայմաններում ձեռնտու չէ ոչ տնտեսությանը, ոչ էլ ժողովրդին։

Ես որպես մարզսովետի դեպուտատ, կատարելով իմ ընտրողների պատվիրանը, մարզի ագրոարդի ղեկավարներին խնդրում եմ մեր սովխոզի բազայի վրա ստեղծել ջերմոցային տնտեսություն, նկատի առնելով Լենինավանում բնական գազի գծի առկայությունը, ինչը նշանակալիորեն կհեշտացնի ջերմոցների տաքացումը ձմեռային շրջանում։

Լենինավանի տարածքում է գտնվում, այնուհետև ասաց Ա. Հակոբյանը, Ղարաբաղի գիտա-փորձարարական բազան, որի տրամադրության տակ կան առավել ընդարձակ վարելահողեր և ջրային ռեսուրսներ, քան հարևան սովխոզներում։ Սակայն այդ գիտա-արտադրական կազմակերպությունը, ազատ լինելով պետվաճառքի պլաններից, այնուամենայնիվ իրականում ավանի և շրջկենտրոնի բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով ապահովելու գործում ոչ մի ավանդ չի մուծում։ Կարծում ենք, այդ բազայի դիրեկտոր ընկ. Շեյխզամանովը, որը նույնպես մարզսովետի դեպուտատ է, ներկա է սույն նստաշրջանին, համապատասխան եզրակացություններ կանի ասվածից։

Հռետորը խոսեց Լենինավան ավանի բնակիչներին (նրանք 4500 հոգի են) խմելու ջրով ապահովելու պրոբլեմի, ավանում քաղաքացիների անհատական տնտեսություններից ստացվող գյուղատնտեսական մթերքների ավելցուկների իրացման համար կոլտնտեսային շուկա բացելու անհրաժեշտության մասին և այլն։

Բազմաճյուղ օժանդակ տնտեսություն ստեղծելու ուղղությամբ ԼՂԻՄ 60-ամյակի անվան Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի կոլեկտիվի փորձի մասին պատմեց ձեռնարկության դիրեկտոր Բ. Ս. Առուշանյանը։ (Այդ տնտեսությունը լավ նախադրյալ է գործարանային ճաշարանի միջոցով աշխատողներին սննդամթերքներով ապահովելու գործում)։ Երկրի պարենային ծրագրի ընդունումից անմիջապես հետո մենք թռչնանոց ենք կառուցել 10 հազար հավի համար, ընթացիկ հնգամյակի սկզբներին սեփական ջերմոցային տնտեսություն ենք ստեղծել 0,9 հեկտար տարածքի վրա, իսկ անցյալ տարի էլ շահագործման հանձնեցինք 300 գլխի համար նախատեսված խոզաբուծական ֆերմա։ Այդ տեղամասերից ստացվող արտադրանքը իրացվում է գործարանային ճաշարանի միջոցով և մասնակիորեն բավարարում է աշխատավորության պահանջմունքները։ Սակայն կապված այն բանի հետ, որ մենք սեփական կերային բազա չունենք, օժանդակ տնտեսության շահութաբերությունը շատ ցածր է։

Լրիվ տնտհաշվարկի, ինքնաֆինանսավորման և ինքնածախսածածկման պայմաններում գործարանին էլ բնավ էլ ձեռնտու չէ ունենալ աշխատանքի վնասաբեր տեղամաս, ասաց նա, բայց և օժանդակ տնտեսությունից հրաժարվել մենք չենք կարող, մարդկանց շահերը վեր են ամեն բանից։ Նշանակում է պետք է հասնել օժանդակ տնտեսության եկամտաբերության, շահութաբերության բարձրացմանը, այն դարձնել շահավետ։ Դրա համար մենք մտադիր ենք Կարմիր շուկա սովխոզի Սխտորաշեն վայրում անմշակ հողերի յուրացման ճանապարհով ստեղծել սեփական կերային բազա, հստակորեն կատարել կերերի ծախսման հաշվառք, աշխատանքի հրավիրել լավ մասնագետների և մասամբ կրճատել սպասարկող անձնակազմի հաստիքները։ Նախատեսվում է նաև ընդլայնել ջերմոցը և կառուցել նոր ֆերմաներ։

Միայն անցյալ տարի մեր բրիգադը տնտեսության ֆոնդ մտցրեց 21 հազար ռուբլի մաքուր շահույթ, ասաց Մարտակերտի շրջանի Մեծ շենի սովխոզի բանվորուհի, դեպուտատ Լ. Ս. Ղահրամանյանը։ Սա ասում է այն մասին, որ մենք սովորել ենք ռուբլին հաշվել տնտհաշվարկի պայմաններում, էկոնոմիկան վարել խնայողաբար։ Բայց մենք աշխատում ենք դժվարին պայմաններում։ Այսօր, օրինակ, բերքահավաք է։ Հացահատիկայինների աճեցված հարուստ բերքը ժամանակին և անկորուստ հավաքելու համար պահանջվում է 5-6 կոմբայն։ Իսկ մենք ունենք ընդամենը 2 կոմբայն, այն էլ հին, ոչ բարձրարտադրողական։ Եթե դրան էլ ավելացնենք լինենք պահեստամասերի պակասը, ապա կարելի է պատկերացնել հնձի տեմպերը։ Էլ չեմ խոսում այն մասին, որ անձրևները մեծ չափով խանգարում են հասկավորների բերքին։ Ահա և ստացվում է այնպես, որ հաց ենք աճեցրել, բայց այն ժամանակին հավաքել չենք կարողանում ու ստիպված թույլ ենք տալիս բերքի մի մասի կորուստ։ Գործի հանդեպ այդպիսի վերաբերմունքով, որ ցույց են տալիս նրանք, ովքեր պարտավոր են հոգալ բերքահավաքի հարահոսի հստակ աշխատանքը ապահովելու մասին, մենք պարենային ծրագիրը չենք կատարի։

19-րդ համամիութենական կուսակցական կոնֆերանսում Մ. Ս. Գորբաչովը պարենային պրոբլեմն անվանեց «հասարակության կյանքի ամենացավոտ կետը, ամենասուր պրոբլեմը»։ Անհրաժեշտ է, որ այդ պրոբլեմը նույնպիսի սրությամբ էլ ընկալեն բոլոր ատյանների ղեկավարները և իրենց աշխատանքը համապատասխանեցնեն այդ պահանջին։